

Այս քաղաքը՝ նոյն իսկ տակաւին Պարիս մայրաքաղաք չեղած, ֆրանսայի հին թագաւորներու բնակութիւնը վայելած է (1) :

Միջին դարու թագաւորներու բնակարանն եղած է հոս՝ հասարակ տուն մը , չբնակարանացած բնակարանի պարտէզներով եւ այգիներով : Ասիկա մեծ ազարակատունի պէս բան մըն էր , Սէն-տ-Ուէնի եւ Սէն-Դընիի մէջտեղը , Սէն գեաին մօտերը կառուցուած , որ — ԺԴ-րդ դարուն սկիզբները գրուած հրովարտակի մը խօսքին նայելով — բազմաթիւ սրահներ , սենեակներ , գոմեր , աղանեստուն մը , 200 տակառ զինիով լեցուն ներքնատուներ , մատուռ մը , երկու բանա , եւն. եւն. , ունէր (2) :

Ազարակատունի կերպարանքէն հանելով զայն առաջին չքեղցնողն եղաւ Գիյոմ դը Կրէպի անունով եկեղեցական մը , 1285 թուականին : Ասոր վախճանելէն ետքը՝ արքայազուն իշխաններու եւ թագաւորներու բնակարան դարձաւ չէնքը :

Այսպէս տեւեց մինչեւ Կարոլոս Զ-ի մահուան արեւնահեղ ժամանակները , եւ՝ նոյն իսկ՝ մինչեւ Կարոլոս Է-ի թագաւորութեան առաջին տարիները , ամբողջ քաղաքն ենթակայ ըլլալով արտաքին եւ ներքին թշնամիներու , որոնք այրեցին , աւերեցին ու թալանեցին զայն : Արքայական պալատին կրակէ ու աւերմունքէ ազատած մասն ալ , այգիներով հանդերձ , Լուգովիկոս ԺԱ իւր մահունէն տարի մը առաջ՝ 1482-ին՝ Սէն-Դընիի եկեղեցիին ընծայեց : Անկէ ետքը պալատին մնացորդ մասերն ալ կործանեցան եւ անհետացան :

Այսօր այն համալսարանը պալատէն , որուն մէջ բնակած են թագաւորներ , իշխաններ , եւ ուրիշ նշանաւոր անձնաւորութիւններ , — մնացած է միայն ջրհոր մը . ա՛սով է որ կը յայտնուի պալատին գտնուած տեղը : Այս ջրհորը կը գտնուի պ. Լըթանտիլ-ի սեպհական տունին մէջ , խոհանոցին քովը , որ՝ հաւանականաբար՝ հին պալատին աւերակներուն վրայ բարձրացած է (3) :

Մինչդեռ Կարոլոս Զ (1368—1422)՝ տակաւին երիտասարդ թագաւոր՝ կը սիրէր այլ եւ այլ պալատներու մէջ բնակիլ , թէ՛ Պարիսի եւ թէ՛ զաւառ-

(1) L. Pannier, *La noble-maison de Saint-Ouen*. Paris, 1872, 302րէն. Ա :

(2) Անդ , եր. 59 :

(3) Անդ , եր. 71 , ծանօթ. 1, եւ ալլուր :